ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1107-Ա

27 հուլիսի 2026թ. ք.Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՐԳԱՍՏԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 20-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 16 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Ռիփսիմե Ռիտա Ֆիլիկյանի լիազորված անձ Արման Սահակի Պողոսյանի դիմումը Ռիփսիմե Ռիտա Ֆիլիկյանին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 19052026-04-0047 տրված՝ 15.05.2026թ., «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 20.05.2026թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրեր՝ 04162LXFKCEAU, 04162A9RWMWH/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Մրգաստան բնակավայրի 20-րդ փողոցի թիվ 16 հասցեում գտնվող անշարժ գույքը բաժանել՝ համաձայն ներկայացված հողամասի բաժանման սխեմայի.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Մրգաստան բնակավայր, 20-րդ փողոց, թիվ 16 բնակելի տուն,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Մրգաստան բնակավայր, 20-րդ փողոց թիվ 16/1 բնակելի տուն:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՄԵԽԱԿՅԱՆ

Ստորագրված է
27 հուլիսի 2026 թվականին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1108-Ա

28 հուլիսի 2026 թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆ-ԱՐՄԱՎԻՐ ՄԱՅՐՈՒՂԻ,22-23 ԿՄ, ԹԻՎ 34/2 ԵՎ ԵՐԵՎԱՆ-ԱՐՄԱՎԻՐ ՄԱՅՐՈՒՂԻ, ԹԻՎ 34/1 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Անդրանիկի փողոցի թիվ 35 տան բնակիչ Գեորգի Հրաչիկի Հովհաննիսյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Երևան-Արմավիր մայրուղի, 22-23 կմ, թիվ 34/2 և Երևան-Արմավիր մայրուղի, թիվ 34/1 հասցեներում գտնվող անշարժ գույքերը /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 25012023-04-0011 տրված՝ 25.01.2023թ., «Արմավիրի մարզ» նոտարական տարածքի նոտար Սամվել Վրեժի Ղարիբյանի կողմից 01.07.2026թ. կնքված թիվ 6212 սեղանամատյանով գրանցված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04011Z5KLHAM/ միավորել և տրամադրել մեկ ընդհանուր հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Երևան-Արմավիր մայրուղի,22-23կմ, թիվ 34/1 հողամաս;
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

Ստորագրված է
28 հուլիսի 2026 թվականին
ք.Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1109-Ա

28 հուլիսի 2026 թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԱՂԿՈՒՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ Հ. ՇԻՐԱԶԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 59 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Ծաղկունք բնակավայրի Ե.Չարենցի փողոցի թիվ 44 տան բնակիչ Գոռ Արմենի Արտեմյանի դիմումը իրեն սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 18112025-04-0003 տրված՝ 18.11.2025թ., «Արդա Բաղրամյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0393/ կողմից 01.07.2026թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրեր՝ 04112CHCPPV9, 04112HFEGR6V/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Ծաղկունք բնակավայրի Հ. Շիրազի 1-ին փողոցի թիվ 59 հասցեում գտնվող անշարժ գույքը բաժանել՝ համաձայն ներկայացված հողամասի բաժանման սխեմայի. Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Ծաղկունք բնակավայր, Հ. Շիրազի 1-ին փողոց, թիվ 59 հողամաս, Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Ծաղկունք բնակավայր, Երևան-Արմավիր մայրուղի,14-15 կմ, թիվ 2 հողամաս:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

Ստորագրված է
28 հուլիսի 2026 թվականին
ք.Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1110-Ա

28 հուլիսի 2026 թ. ք. Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» օրենքի 3-րդ գլխի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 30.10.2025թ. թիվ 27-Ն հրամանով հաստատված կարգի պահանջներով և հիմք ընդունելով 28.07.2026թ.-ին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի մրցութային հանձնաժողովի ձևավորման նպատակով հատուկ ծրագրով ընտրված հանձնաժողովի անդամների ցանկը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն սույն որոշման թիվ 1, թիվ 2, թիվ 3 և թիվ 4 հավելվածների:

2. Սահմանել, որ համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցույթը անցկացվում է ՀՀ կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Recoverable Signature

X Ստորագրող
ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ
3208860013

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: MEKHAKYAN ARGISHTI 3208860013 **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1111Ա

28 հուլիսի 2026թ.

ք. Էջմիածին

ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Էջմիածնի քաղաքային համայնքի և Խաչիկ Մկրտչյանի միջև 23.03.2006թ. /սեղանամատյան 1494/ կնքվել է Էջմիածնի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Մ.Մաշտոցի թիվ 59 շենքի հարակից տարածքում գտնվող 17քմ մակերեսով տարածքի վարձակալության պայմանագիր:

Այժմ Խաչիկ Մկրտչյանի լիազորված անձ Սիլվա Լիպարիտի Գևորգյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան, վերը նշված հողամասի վարձակալության պայմանագիրը լուծելու խնդրանքով:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ, 468-րդ հոդվածների և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Էջմիածին համայնքի և Խաչիկ Մկրտչյանի միջև 23.03.2006թ. /սեղանամատյան 1494/ կնքված համայնքի սեփականությունը հանդիսացող Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Մ.Մաշտոցի թիվ 59 շենքի հարակից տարածքում գտնվող 17քմ մակերեսով հողամասի վարձակալության պայմանագիրը լուծել ՀՀ օրենքով սահմանված կարգով:

2.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Խաչիկ Մկրտչյանին իրազեկելու հաջորդ օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1112Ա

28 հուլիսի 2026թ. գ. Էջմիածին

ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Էջմիածնի քաղաքային համայնքի և Նվեր Միքայելյանի միջև 23.03.2006թ. /սեղանամատյան 1493/ կնքվել է Էջմիածնի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Մ.Մաշտոցի թիվ 59 շենքի հարակից տարածքում գտնվող 20քմ մակերեսով տարածքի վարձակալության պայմանագիր:

Այժմ Նվեր Միքայելյանի լիազորված անձ Սիլվա Լիպարիտի Գևորգյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան, վերը նշված հողամասի վարձակալության պայմանագիրը լուծելու խնդրանքով:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ, 468-րդ հոդվածների և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Էջմիածին համայնքի և Նվեր Միքայելյանի միջև 23.03.2006թ. /սեղանամատյան 1493/ կնքված համայնքի սեփականությունը հանդիսացող Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Մ.Մաշտոցի թիվ 59 շենքի հարակից տարածքում գտնվող 20քմ մակերեսով հողամասի վարձակալության պայմանագիրը լուծել ՀՀ օրենքով սահմանված կարգով:

2.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Նվեր Միքայելյանին իրազեկելու հաջորդ օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1113Ա

28 հուլիսի 2026թ. ք. Էջմիածին

ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Եռյակ Կապիտալ» ՍՊԸ-ի տնօրեն Կարապետ Արսենի Կարապետյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան «Եռյակ Կապիտալ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ 25.05.2026թ. տրված թիվ 25052026-04-0070 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական / Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Խ.Կարճիկյան փողոցի թիվ 1 հասցեում գտնվող 4.4573հա մակերեսով հողամասից 2.632հա մակերեսով մասի գործառնական նշանակությունը բնակավայրերի հասարակական կառուցապատումից փոփոխել բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-ն որոշմամբ հաստատված հավելվածի 24-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր 8 և Արմավիր 6 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի և Ոսկեհատ գյուղի գլխավոր հատակագծերի նախագծերը /գոտևորման նախագծերը/ հաստատելու մասին ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու 26.04.2022թ. առաջին նստաշրջանի արտահերթ առաջին նիստի թիվ 80 որոշման, Արմավիրի մարզպետի 19.05.2022թ. թիվ ՄՈ/344-2022 պահանջները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Խ.Կարճիկյան փողոցի թիվ 1 հասցեում գտնվող 4.4573հա մակերեսով հողամասից 2.632հա մակերեսով մասի գործառնական նշանակությունը բնակավայրերի հասարակական կառուցապատումից փոփոխել բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1114-Ա

29 հուլիսի 2026 թ. | ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 29 ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Գ. Նարեկացու փողոցի թիվ 8ա տան բնակիչ Վարդիթեր Հայկազի Երանյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Անդրանիկ թաղամասի թիվ 29 հասցեում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ 04.09.1991թ. կնքված թիվ 5210 գրանցամատյանով գրանցված բնակելի տան առուծախի պայմանագիր և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04011TVYFF9S/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Զորավար Անդրանիկի 1-ին թաղամաս, թիվ 29 բնակելի տուն:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

Ստորագրված է
29 հուլիսի 2026 թվականին
ք.Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1115-Ա

29 հուլիսի 2026 թ. ք. Էջմիածին

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՐԴԻԹԵՐ ՀԱՅԿԱԶԻ ԵՐԱՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Գրիգոր Նարեկացու փողոցի թիվ 8ա տան բնակիչ՝ Վարդիթեր Հայկազի Երանյանի դիմումը պարզվեց, որ /հիմք՝ 04.09.1991թ. կնքված թիվ 5210 գրանցամատյանով գրանցված բնակելի տան առուծախի պայմանագիր, «ՅԱՐԴ» ՍՊԸ-ի /որակավորման վկայական թիվ 0502/ կողմից 30.04.2026թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04011TVYFF9S/ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Զորավար Անդրանիկի 1-ին թաղամասի թիվ 29 հասցեում գտնվող 0.04541 հա մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում գտնվող բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հաշվի առնելով վերը նշվածը, հիմք ընդունելով, որ անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով նախատեսված պայմաններին և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքով և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Զորավար Անդրանիկի 1-ին թաղամասի թիվ 29 հասցեում գտնվող 0.04541 հա մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում մինչև 15.05.2001թ. կառուցված, 80% և ավելի ավարտվածության աստիճան ունեցող բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները համարել Վարդիթեր Հայկազի Երանյանի /ծնված՝ 19.06.1967թ./ սեփականությունը:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

Ստորագրված է
29 հուլիսի 2026 թվականին
ք.Էջմիածին

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1116-Ա

29 հուլիսի 2026թ. ք.Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԱՂԿՈՒՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ 1 ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 22 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՉ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՄԲ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՍԱՇԱ ԱՂՎԱՆԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՏՈՒԳԱՆՔ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի ղեկավարը, քննության առնելով թիվ 18/26 վարչական գործը՝ Վաղարշապատ համայնքի Ծաղկունք բնակավայրի Թումանյան 1 փողոցի թիվ 22 հասցեում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողամասը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելու հետևանքով առաջացած վարչական իրավախախտման համար տուգանք նշանակելու մասին, **պարզեց որ.**

Սաշա Աղվանի Մկրտչյանը (հասցե՝ Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնք, Ծաղկունք, Թումանյան 1 փող., 22 տուն, նույնականացման քարտ՝ 010312635, տրված 08.10.2018թ.-ին, 057-ի կողմից) իրեն սեփականության իրավունքով պատկանող Վաղարշապատ համայնքի Ծաղկունք բնակավայրի Թումանյան 1 փողոցի թիվ 22 հասցեում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասում, խախտելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները, հողամասն օգտագործել է ոչ նպատակային նշանակությամբ՝ գյուղատնտեսական նշանակության հողամասում տեղադրել է արևային կայաններ, ինչի կապակցությամբ Վաղարշապատի համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության բաժնի կողմից 13.07.2026 թվականին կազմված թիվ 6 արձանագրության, տեղազննության ակտի հիման վրա 2026 թվականի հուլիսի 13-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է վարչական վարույթ:

Վաղարշապատի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովը, հրավիրել և անցկացրել է լսում, Սաշա Աղվանի Մկրտչյանի մասնակցությամբ:

<u>Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.</u>

- Վաղարշապատի համայնքապետարանի ճարտարապետության, քաղաքաշինության և հողաշինության բաժնի կողմից 13.07.2026 թվականին կազմված թիվ 6 արձանագրությունը և 13.07.2026 թվականի տեղազննության ակտը:
- Տարածքի լուսանկարահանման փաստաթղթերը:
- Հանձնաժողովի 28.07.2026թ. թիվ 18/26 վարչական գործով լսումներ անցկացնելու վերաբերյալ արձանագրությունը

- Սաշա Աղվանի Մկրտչյանի անվամբ 07.04.2008 թվականին տրված թիվ 2535916 սեփականության վկայականի պատճենը
- Հողամասի գլխավոր հատակագծի պատճենը /կազմված ԱՁ «Ավագ Ավագյան Գագիկի»-ի կողմից, լիցենզիա 0331/ և հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Սաշա Աղվանի Մկրտչյանը Վաղարշապատ համայնքի տարածքում, իրեն սեփականության իրավունքով պատկանող Վաղարշապատ համայնքի Ծաղկունք բնակավայրի Թումանյան 1 փողոցի թիվ 22 հասցեում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողամասում, խախտելով՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները, հողամասն օգտագործվում է ոչ նպատակային նշանակությամբ, տեղադրելով արևային կայաններ, ինչի առնչությամբ Վաղարշապատի համայնքապետարանի ճարտարապետության, քաղաքաշինության և հողաշինության բաժնի կողմից կատարվել է տեղազննություն և իրավախախտման փաստի առթիվ 13.07.2026 թվականին կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 6 արձանագրությունը:

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով՝ 2026 թվականի հուլիսի 13-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով, Վաղարշապատի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2026 թվականի հուլիսի 28-ին հրավիրվել է լսում, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է Սաշա Աղվանի Մկրտչյանը:

Ներկայանալով վարչական վարույթի նիստին Սաշա Աղվանի Մկրտչյանը հայտարարեց, մեջբերում 28.07.2026թ.-ի թիվ 1 արձանագրությունից. *«Միջոցներ ենք ձեռնարկել հողամասի օգտագործման նպատակը փոփոխելու, ունեմ հողի նախագիծ, աշխատանքները ընթացքի մեջ են, կազմվել է հողամասի գլխավոր հատակագիծ և ինքնակամի կայանի ու շինությունների մասով կատարված է հաշվառում: Իրավախախտումը կատարել եմ չիմացությամբ:»*

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Սաշա Աղվանի Մկրտչյանի հայտարարությունները գտնում եմ, որ ապացուցված կարելի է համարել այն փաստը, որ Սաշա Աղվանի Մկրտչյանի կողմից կատարվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավախախտումը և վերջինս սույն դեպքում հանդիսանում է իրավախախտման սուբյեկտ:

<u>Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը</u>.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ համայնքի ղեկավարը կանխարգելում, կասեցնում և վերացնում է ապօրինի հողօգտագործումը համայնքի վարչական սահմաններում, օրենքով սահմանված դեպքերում ու կարգով հողային օրենսդրության պահանջները խախտողների նկատմամբ կիրառում է վարչական տույժեր, ինչպես նաև իրավասու մարմիններ է ներկայացնում հաղորդումներ՝ իրավախախտում թույլ տված անձանց՝ օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված վերահսկողություն է իրականացնում համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ:

«Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքային և գյուղական համայնքի ղեկավարը համայնքի վարչական սահմաններում վերահսկողություն է իրականացնում՝ հողամասերն ըստ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու նկատմամբ:

Տվյալ պարագայում Սաշա Աղվանի Մկրտչյանը Վաղարշապատ համայնքի Ծաղկունք բնակավայրի Թումանյան 1 փողոցի թիվ 22 հասցեում գյուղատնտեսական նշանակության հողամասն օգտագործում է ոչ նպատակային նշանակությամբ՝ տեղադրել է արևային կայաններ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հողամասերը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 54-րդ, 278-րդ և 279-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Սաշա Աղվանի Մկրտչյանի նկատմամբ նշանակել տուգանք՝ հողամասը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելու համար **100 000 /հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով:**
2. Սույն որոշումը կարող է բողոքարկվել՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և /կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա.ՄԵԽԱԿՅԱՆ**

Ստորագրված է
29 հուլիսի 2026 թվականին
ք.Էջմիածին

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1117-Ա

29 հուլիսի 2026թ. ք.Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՉ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՄԲ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ԵՎ ՇԵՆՔԵՐԸ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՄԲ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ «ԱՆԱՀԻՏ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԻՄՈՆԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՏՈՒԳԱՆՔ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի ղեկավարը, քննության առնելով թիվ 17/26 վարչական գործը՝ Վաղարշապատ համայնքի Արշալույս բնակավայրում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակության արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ նշանակության հողամասը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելու, իսկ շենքերը և շինություններն օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ ոչ նպատակային օգտագործելու հետևանքով առաջացած վարչական իրավախախտումների համար տուգանք նշանակելու մասին, **պարզեց որ.**

«Անահիտ Կարապետյան Սիմոնի» անհատ ձեռնարկատերը (գրանցման հասցե՝ Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնք, ք.Էջմիածին, Կամոյի փողոց, 2Ա շենք, թիվ 34 բն., պետ.գրանցման համար՝ 99.1072795/2019-05-07, ՀՎՀՀ՝ 49639215) իր կողմից վարձակալած տարածքում (հիմք՝ «Արա և Այծեմնիկ» ԲԲԸ-ի և «Անահիտ Կարապետյան Սիմոնի» Ա/Ձ-ի միջև 01.09.2025թ. կնքված գույքի վարձակալության պայմանագիր) Վաղարշապատ համայնքի Արշալույս բնակավայրում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակության, արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ գործառնական նշանակության հողամասում, խախտելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասով և 152.2-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները, հողամասն օգտագործել է ոչ նպատակային նշանակությամբ՝ բնակավայրերի հասարակական, շենքերը և շինությունները՝ անասնագոմը՝ օգտագործվում է որպես հասարակական օբյեկտ, ինչի կապակցությամբ Վաղարշապատի համայնքապետարանի ճարտարապետության, քաղաքաշինության և հողաշինության բաժնի կողմից 14.07.2026 թվականին կազմված թիվ 5 արձանագրության, տեղազննության ակտի հիման վրա 2026 թվականի հուլիսի 14-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասի և 152.2-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է վարչական վարույթ:

Վաղարշապատի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովը, հրավիրել

և անցկացրել է լսում, «Անահիտ Կարապետյան Սիմոնի» անհատ ձեռնարկատիրոջ լիազոր ներկայացուցչի մասնակցությամբ:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

- Վաղարշապատի համայնքապետարանի ճարտարապետության, քաղաքաշինության և հողաշինության բաժնի կողմից 14.07.2026 թվականին կազմված թիվ 5 արձանագրությունը և 14.07.2026 թվականի տեղազննության ակտը:
- Տարածքի լուսանկարահանման փաստաթղթերը:
- Հանձնաժողովի 28.07.2026թ. թիվ 17/26 վարչական գործով լսումներ անցկացնելու վերաբերյալ արձանագրությունը:
- Հանձնաժողովի 29.07.2026թ. թիվ 17/26 վարչական գործով լսումներ անցկացնելու վերաբերյալ արձանագրությունը:
- «Արա և Այծեմնիկ» ԲԲԸ-ի և «Անահիտ Կարապետյան Սիմոնի» Ա/Ձ-ի միջև 01.09.2025թ. կնքված գույքի վարձակալության պայմանագիրը:
- ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրից պետական միասնական գրանցամատյանից քաղվածքը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

«ԱՐԱ ԵՎ ԱՅԾԵՄՆԻԿ» ԲԲ ընկերությունը Վաղարշապատ համայնքի տարածքում, իրեն սեփականության իրավունքով պատկանող՝ Վաղարշապատ համայնքի Արշալույս բնակավայրում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասում, խախտելով՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասով և 152.2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները, գյուղատնտեսական նպատակային նշանակության, արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ գործառնական նշանակության հողամասն օգտագործում է ոչ նպատակային նշանակությամբ՝ բնակավայրերի նպատակային նշանակության, իսկ շենքերը և շինությունները՝ անասնագոմը, օգտագործում է որպես հասարակական օբյեկտ, ինչի առնչությամբ Վաղարշապատի համայնքապետարանի ճարտարապետության, քաղաքաշինության և հողաշինության բաժնի կողմից կատարվել է տեղազննություն և իրավախախտման փաստի առթիվ 14.07.2026 թվականին կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 5 արձանագրությունը:

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով՝ 2026 թվականի հուլիսի 14-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով, Վաղարշապատի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2026 թվականի հուլիսի 28-ին հրավիրվել է լսում, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է «ԱՐԱ ԵՎ ԱՅԾԵՄՆԻԿ» ԲԲԸ:

Վարչական վարույթի նիստին ներկայացել է տարածքը փաստացի վարձակալած «Անահիտ Կարապետյան Սիմոնի» անհատ ձեռնարկատիրոջ ներկայացուցիչ Արայիկ Հայրապետի Նավասարդյանը և խնդրել է վարույթը հետաձգել մեկ օրով՝ վարձակալության պայմանագիրը և համապատասխան փաստաթղթերը ներկայացնելու համար:

Վաղարշապատի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2026 թվականի հուլիսի 29-ին հրավիրված լսմանը «Անահիտ Կարապետյան Սիմոնի» անհատ ձեռնարկատիրոջ ներկայացուցիչ Արայիկ Հայրապետի Նավասարդյանը ներկայացրել է Գույքի Վարձակալության պայմանագիր և ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրից պետական միասնական գրանցամատյանից քաղվածք:

Հաշվի առնելով վերոգրյալը գտնում եմ, որ ապացուցված կարելի է համարել այն փաստը, որ «Անահիտ Կարապետյան Սիմոնի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից են կատարվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասով և 152.2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավախախտումը և վերջինս սույն դեպքում հանդիսանում է իրավախախտման սուբյեկտ:

<u>Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը</u>.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ համայնքի ղեկավարը կանխարգելում, կասեցնում և վերացնում է ապօրինի հողօգտագործումը համայնքի վարչական սահմաններում, օրենքով սահմանված դեպքերում ու կարգով հողային օրենսդրության պահանջները խախտողների նկատմամբ կիրառում է վարչական տույժեր, ինչպես նաև իրավասու մարմիններ է ներկայացնում հաղորդումներ՝ իրավախախտում թույլ տված անձանց՝ օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված վերահսկողություն է իրականացնում համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ:

«Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքային և գյուղական համայնքի ղեկավարը համայնքի վարչական սահմաններում վերահսկողություն է իրականացնում՝ հողամասերն ըստ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու նկատմամբ:

Տվյալ պարագայում «Անահիտ Կարապետյան Սիմոնի» անհատ ձեռնարկատերը Վաղարշապատ համայնքի Արշալույս բնակավայրում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակության, արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ գործառնական նշանակության հողամասը օգտագործում է ոչ նպատակային նշանակությամբ, իսկ շենքերը և շինություններն օգտագործում է օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ՝ որպես հասարակական օբյեկտ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հողամասերը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 152.2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ շենքերը և շինությունները օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ ոչ նպատակային օգտագործելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկից մինչև հիսնապատիկի չափով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 32-րդ հոդվածի առաջին պարբերության համաձայն՝ վարչական իրավախախտման համար տույժը նշանակվում է կատարված իրավախախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմատիվ ակտով սահմանված շրջանակներում, վարչական իրավախախտումների մասին օրենսդրության հիմունքներին, նույն օրենսգրքին և վարչական իրավախախտումների վերաբերյալ մյուս ակտերին ճիշտ համապատասխան:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 35-րդ հոդվածի համաձայն՝ մեկ անձի կողմից երկու կամ ավելի վարչական իրավախախտումներ կատարելու դեպքում վարչական տույժը նշանակվում է յուրաքանչյուր իրավախախտման համար առանձին-առանձին:

Տվյալ դեպքում՝ «Անահիտ Կարապետյան Սիմոնի» անհատ ձեռնարկատերը կատարել է թվով 2 /երկու/ վարչական իրավախախտումներ, որոնց համար տույժը պետք է նշանակվի՝ յուրաքանչյուր իրավախախտման համար առանձին-առանձին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 54-րդ, 152.2-րդ, 278-րդ և 279-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.«Անահիտ Կարապետյան Սիմոնի» անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ նշանակել տուգանք՝

1) հողամասերը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելը համար՝ 100 000 /հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով,

2) շենքերը և շինությունները օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ ոչ նպատակային օգտագործելու համար՝ 50 000 /հիսուն հազար/ ՀՀ դրամի չափով:

2. Սույն որոշումը կարող է բողոքարկվել՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և /կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա.ՄԵԽԱԿՅԱՆ**

Ստորագրված է
29 հուլիսի 2026 թվականին
Ք. Էջմիածին